ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.01.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Սեյսմշին» ՍՊԸ-ի 29.12.2017թ. բողոքը և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի 16.01.2018թ. համանման բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/55 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Սեյսմշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Սեյսմշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 29.12.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են՝

Քաղաքաշինության բնագավառում «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» ըստ հետևյալ ոլորտների՝

2/2	***Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).***
1	*2*
1	1. *Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն*

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ ընկերությունների հայտ են ներկայացրել նաև «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն, «Սեյսմշին» ՍՊԸ-ն և «Գ. Պապոյան» ՍՊԸ-ն /կոնսորցիում/:

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ն 25.12.2017թ. հայտով ներկայացրել է Ընթացակարգի հրավերով պահանջվող լիցենզիան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3 կետի 3.1 և 3.2 ենթակետերի համաձայն՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հայտը համապատասխանել է հրավերի պահանջներին և գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության 4 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին, իսկ երկրորդ տեղ զբաղեցնող՝ «Սեյսմշին» ՍՊ և «Գ. Պապոյան» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/:

Պատվիրատուն www.gnumner.am կայքում 29.12.2017թ. հրապարակել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան և վերջինս ճանաչվել է հաղթող մասնակից:

«Սեյսմշին» ՍՊԸ-ն 27.12.2017թ. թիվ 12-17/369 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտե /այսուհետ նաև՝ Կոմիտե/ և խնդրել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել տեղեկատվություն 08.02.2010թ. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված թիվ 13763 /շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության/ լիցենզիայի գործունեության վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված գրության, Կոմիտեն 28.12.2017թ. թիվ 22/22.1/7868-17 գրությամբ հայտնել է, որ 2010թ. փետրվարի 8-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված /շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության/ թիվ 13763 լիցենզիայի գործողությունը կասեցվել է, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016թ. հուլիսի 7-ի թիվ 130-Ա հրամանով՝ ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 124-Ն որոշման պահանջների չհամապատասխանելու պատճառով:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր նշվել են հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են.

Քաղաքաշինության բնագավառում «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» ըստ հետևյալ ոլորտների՝

Հ/Հ	***Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).***
1	*2*
1	2. *<u>Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն</u>*

Այսպիսով, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգի հրավերը, 25.12.2017թ. հայտով ներկայացրել է հրավերով պահանջնող լիցենզիան, որը տվյալ պահին ըստ Կոմիտեի կողմից տրամադրված գրության կասեցված է եղել, քանի որ չի

համապատասխանել << կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 124-Ն որոշման պահանջներին, այսինքն ընկերությունը իրավունք չի ունեցել և չունի ծավալելու նմանատիպ գործունեություն:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ Երևանի քաղաքապետարանի «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից

մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 29.12.2017թ. ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին արգելել գնման ընթացակարգի մասով կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ՝ այն է շարունակել կատարել գնման ընթացակարգի մասով որևէ գործողություններ, այդ թվում նաև կնքել պայմանագրեր:

2. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3 կետի 3.1 և 3.2 ենթակետերով կայացված՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին բավարարող և վերջինիս 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումները և սույն որոշումից բխով այլ որոշումները:

3. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով 29.12.2017թ. հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Սեյսմշին» ՍՊԸ-ն «Հուսալի կամար» ՍՊԸ-ի կողմից ԳԲԽ-ԱՄ-2017/55 բողոքի շրջանակներում 16.01.2018թ. ներկայացված համանման բողոքի դեմ հայտնել է հետևյալ առարկությունները.

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին առաջարկել «Հուսալի կամար» ՍՊԸ-ին շտկել լիցենզիայում առկա անհամապատասխանությունները և դադարեցնել նույն հանձնաժողովի «Սեյսմշին» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումը:

Ընկերությունը հայտնել է, որ բողոքաբերի պահանջներն անհիմն են և ենթակա են մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Բողոքաբերը բողոքում նշել է, որ կազմակերպությունը կատարել է լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի վճարները, տեղյակ չի եղել, որ լիցենզիան կասեցված է եղել:

Այս կապակցությամբ ցանկանում ենք հայտնել, որ կազմակերպության կողմից պետական տուրքերը վճարելը որևէ առնչություն չի կարող ունենալ «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից բողոքում նշված այն հանգամանքի հետ, որ «Հուսալի կամար» ՍՊԸ-ի լիզենզիան հայտը ներկայացնելու օրվա դրությամբ կասեցված է եղել, այսինքն բողոքաբերը փաստացի չի ունեցել լիցենզիա, միաժամանակ Երևանի քաղաքապետարանին ներկայացնելով անհամապատասխան տեղեկատվություն:

Բողոքաբերը միայն Ընկերության կողմից բողոքը ներկայացնելուց հետո է կատարել լիցենզիան վերականգնելու հետ կապված գործողություններ, այն է՝ 15.01.2018թ. դրությամբ կատարել է համապատասխան ներդիրների շտկում, իսկ այս պարագայում իրատեսական և կիրառելի չի կարող լինել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի կիրառումը, քանի որ փաստացի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ լիցենզիան եղել է կասեցված, իսկ կասեցված լիցենզիայի առկայության պայմաններում հայտը ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է բողոքաբերի բողոքում նշված այն հանգամանքին, որ www.minurban.am պաշտոնական կայքում առկա չէ տեղեկատվություն այն մասին, որ «Հուսալի կամար» ՍՊԸ-ի լիցենզիայի գործողությունները կասեցվել են, ապա հայտնում ենք, որ վերոնշյալի վերաբերյալ ապացույցները արդեն ներկայացվել է Գնումների բողոքարկման խորհրդին, որը փնտրելու համար մեծ ջանքեր բոլորովին անհրաժեշտ չի եղել: Բացի այդ գործում առկա է նաև ապացույց առ այն, որ 2010թ. փետրվարի 8-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված /շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության/ թիվ 13763 լիցենզիայի գործողությունը կասեցվել է, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016թ. հուլիսի 7-ի թիվ 130-Ա հրամանով՝ ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 124-Ն որոշման պահանջների չհամապատասխանելու պատճառով, ինչը բավարար ապացույց է հանդիսանում համոզվելու նրանում, որ վերջինիս լիցենզիան իրոք եղել է կասեցված:

Բողոքաբերը բողոքում նշել է, որ «Սեյսմշին» ՍՊ և «Գ. Պապոյան» ՍՊ ընկերությունների /կոնսորցիում/ կողմից ներկայացված հայտի թիվ 2.1 և թիվ 8 հավելվածներում Գ. Պապոյանի անձնագրային տվյալները տարբեր են, մասնավորապես թիվ 2.1 հավելվածում նշված է 10.14.2004թ., իսկ թիվ 8 հավելվածում՝ 10.04.2004թ. և որ այս պարագայում թիվ 8 հավելվածը ենթակա չէ շտկման:

Այս կապակցությամբ ցանկանում ենք հայտնել, որ բոլորին հայտնի է, որ տարին ունի ընդամենը 12 ամիս, իսկ 14 ամիսը չկա: Այս փաստից ելնելով՝ ակնհայտ է դառնում, որ սխալը եղել է մասնակցի կողմից ներկայացված թիվ 2.1 հավելվածում, ինչը Պատվիրատուն կարծում ենք համարել է ոչ էական, և չի կիրառել Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները և չի առաջարկել Ընկերությանը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Եթե ամեն դեպքում Խորհուրդը կգտնի, որ վերոնշյալ սխալը էական է, ապա այս պարագայում «Սեյսմշին» ՍՊԸ-ին պետք է տրվի արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մեկ օր ժամանակ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի բողոքում նշված այն հանգամանքին, որ կողմերի միջև կնքված կոնսորցիումի պայմանագրում բացակայում է որևէ նշում, թե մրցույթով նախատեսված աշխատանքները ում կողմից պետք է կատարվեն, իսկ տվյալ դեպքում «Գ. Պապոյան» ՍՊԸ-ն չունի համապատասխան լիցենզիա, ապա այս կապակցությամբ ցանկանում ենք հայտնել, որ «Սեյսմշին» ՍՊ և «Գ. Պապոյան» ՍՊ ընկերությունների միջև կնքված կոնսորցիումի պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ կողմերը համատեղ գործողություններ իրականացնելու նպատակով պարտավորվում են տրամադրել հետևյալ միջոցները՝

1.2.1. առաջատար գործընկերը /«Սեյսմշին» ՍՊԸ-ն/ տրամադրում է աշխատանքային ռեսուրսներ, հիմնական տեխնիկական միջոցներ, մասնագիտական փորձառություն, ֆինանսական միջոցներ /50 %/:

1.2.2. գործընկեր 1-ը /«Գ. Պապոյան» ՍՊԸ-ն/ տրամադրում է ֆինանսական միջոցներ /50%/:

Վերոգրյալ պայմանագրից ակնհայտ է դառնում, որ «Գ. Պապոյան» ՍՊԸ-ն բացի ֆինանսական միջոցներից այլ ավանդ չի ներդրել մրցույթի հրավերով նախատեսված աշխատանքները կատարելու համար, իսկ քանի որ լիցենզիան տրվում է ոչ թե կազմակերպության, այլ կազմակերպությունում աշխատող աշխատակցին, ուստի տվյալ

պարագայում «Սեյսմշին» ՍՊԸ-ն աշխատանքային ռեսուրսներ ներդնելով, ներդնում է նաև համապատասխան լիզենզավորված աշխատակցի, որով ապահովում է համապատասխան լիցենզիայի առկայությունը:

Գնումների բողոքարկման խորհրդում 23.01.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհրդի այն հարցին, որ եթե չլիներ ֆինանսական միջոցներ ապահովելու խնդիրներ կողմերի միջև, արդյոք կկնքվեր կոնսորցիումի պայմանագիր, թե «Սեյսմշին» ՍՊԸ-ն մենակ կարող էր մասնակցել մրցույթին, «Սեյսմշին» ՍՊԸ-ի տնօրենը պատասխանեց, որ Ընկերությունը լիովին համապատասխանում է մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին, և միայն ֆինանսական միջոցների 50 տոկոսի անհրաժեշտության դեպքում է կնքել կոնսորցիումի պայմանագիր, և եթե չլիներ այդ խնդիրը, Ընկերությունը մենակ կարող էր մասնակցել մրցույթին»:

Ամփոփելով վերագրյալը, Ընկերությունը 25.01.2018թ. ներկայացված գրությամբ Խորհրդին խնդրել է «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. ներկայացված բողոքը բավարարել, իսկ «Հուսալի կամար» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. ներկայացված համանման բողոքը մերժել:

«Սեյսմշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 10.01.2018թ. ժամը 11:30-ի և 23.01.2018թ. ժամը 12:20-ի նիստերի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2.«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված միջնորդությամբ Խորհրդի 10.01.2018թ. միջանկյալ որոշմամբ ԳԲԽ-ԱՄ-2017/55 բողոքով ներգրավվել է որպես երրորդ կողմ:

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ն 16.01.2018թ. համանման բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, որով հայտնել է, որ «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի քննությանն է ներկայացվել «ԳԲԽ-ԱՄ-2017/55» բողոքը, որով վիճարկվել է Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված Երևան քաղաքի

վթարային շենքերի և շինությունների հետազոտման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի առանձին որոշումներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք:

Ընկերությունը հայտնել է, որ ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներով՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն ներկայացնում է «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. ներկայացրած «ԳԲԽ-ԱՄ-2017/55» բողոքին համանման բողոք, որով նույնպես վիճարկում է Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի առանձին որոշումներ:

Ընկերությունը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից՝ Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման նպատակով կազմակերպել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն, որը 25.12.2017թ.-ին ներկայացրած հայտով ներկայացրել է նաև մրցույթի հրավերով պահանջվող համապատասխան լիցենզիան:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի հրավերի համաձայն՝ հրավերի աշխատանքների կատարման համար պահանջվում էր՝ քաղաքաշինության բնագավառում «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն /բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների/», ըստ հետևյալ ոլորտների՝ շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն տեսակի լիցենզիա:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 25.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանել է մրցույթի հրավերին և գնահատվել բավարար:

Նույն արձանագրության 4-րդ կետով մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

«Սեյսմշին» ՍՊԸ-ն 29.12.2017թ. Խորհրդին ներկայացրած «ԳԲԽ-ԱՄ-2017/55» բողոքով հայտնել է հետևյալը. ««Սեյսմշին» ՍՊԸ-ն 27.12.2017թ. թիվ 12.17/369 գրությամբ դիմել է ՀՀ

ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտե /այսուհետ նաև՝ Կոմիտե/ և խնդրել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել տեղեկատվություն 08.02.2010թ. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված թիվ 13763 /շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության/ լիցենզիայի գործողության վերաբերյալ: Ի պատասխան վերը նշված գրության՝ Կոմիտեն 28.12.2017թ. թիվ 22/22. 1/7868-17 գրությամբ հայտնել է, որ 2010թ. փետրվարի 8-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված /շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության/ թիվ 13763 լիցենզիայի գործողությունը կասեցվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016թ. հուլիսի 7-ի թիվ 130-Ա հրամանով ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 124-Ն որոշման պահանջների չհամապատասխանելու պատճառով»:

Ընկերությունը հայտնել է, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին 2010թ. փետրվարի 8-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրամադրվել է շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության լիցենզիա, որը պահանջվում է մրցույթի Հրավերի 1 կետի 1.1 ենթակետով:

www.minurban.am պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն (կցվում է)՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի 2010թ. փետրվարի 8-ին տրամադրված շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության թիվ 13763 լիցենզիան գործողության մեջ է, դրա գործողության կասեցման մասին որևէ հրապարակում առկա չէ:

Ավելին, տեղեկացված չլինելով թիվ 13763 լիցենզիան գործողության կասեցման մասին, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն կատարել է լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի վճարումները: Մասնավորապես, «ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ-ի թիվ 1318 և թիվ 1316 բանկային քաղվածքների համաձայն՝ 02.02.2016թ.-ին կատարվել է վճարում ՀՀ քաղաքաշինության նախարարություն շենք և շինությունների հետազոտության թիվ 13763 լիցենզիայի պետ. տուրքի գծով և 30.01.2017թ.-ին նորից կատարվել է պետ. տուրքի վճարում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն շենք և շինությունների հետազոտության թիվ 13763 լիցենզիայի համար (կցվում են):

Բացի այդ, տեղեկացված չլինելով թիվ 13763 լիցենզիայի գործողության կասեցման մասին, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն իրավասու մարմնին ներկայացրել է նաև լիցենզիայի համար նախատեսված համապատասխան հաշվետվությունները, որոնք նույնպես ընդունվել են լիազոր մարմնի կողմից:

Եվ միայն «Սեյսմշին» ՍՊԸ-ի 29.12.2017թ. Խորհրդին ներկայացրած «ԳԲԽ-ԱՄ-2017/55» բողոքով է պարզ դարձել, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի լիցենզիայի գործունեությունը ժամանակավոր կասեցված է:

Սակայն «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հայտի գնահատման փուլում լիցենզիայի գործունեությունը ժամանակավոր կասեցված լինելու հանգամանքը պարզվելու, «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից վերոհիշյալ թերությունը արձանագրվելու և հապատասխան շտկման հնարավորություն «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրելու դեպքում ընկերությունը հնարավորություն կստանար կներկայացնելու ապացույցներ, որ 2010թ. փետրվարի 8-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության թիվ 13763 լիցենզիայի գործողությունը կասեցված չէ /ապացույցը կցվում է/: Այսինքն «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն հնարավորություն կունենար շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Երևանի քաղաքապետարանի կողմից՝ Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սեյսմշին» ՍՊԸ-ն և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ն /կոնսորցիում/:

«Գ. Պապոյան» ՍՊԸ-ն «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հավելված 2.1-ում ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը սյունակում լրացրել է՝ Անձ. AG0242241, տրված 10.14.2004թ., 026-ի կողմից, մինչդեռ «Գ. Պապոյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տուժանքի մասին համաձայնագրի հավելված 8-ում նշվել է անձ. AG0242241, տրված 10.04.2004թ., 026-ի կողմից:

Վերոհիշյալից բխում է, որ այս երկու փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, իսկ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովման մեջ որևէ շտկում արգելվում է:

Բացի այդ, Ընկերության ունեցած տեղեկությունների համաձայն՝ «Գ. Պապոյան» ՍՊԸ-ն չունի մրցույթի հրավերով պահանջված շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության լիցենզիայի: Միևնույն ժամանակ «Սեյսմշին» ՍՊԸ-ի և «Գ.Պապոյան» ՍՊԸ-

ի միջև 22.12.2017թ. կնքված կոնսորցիումի պայմանագրում բացակայում է որևէ նշում, որ նշված մրցույթով պահանջվող աշխատանքները ում կողմից պետք է կատարվեն: Տվյալ դեպքում ենթադրվում է, որ մրցույթով նախատեսված աշխատանքները կարող են տեսականորեն կատարվել երկու մասնակցի կողմից, իսկ հրավերի համաձայն՝ աշխատանքների կատարման համար պահանջվում է համապատասխան լիցենզիա, որը «Գ.Պապոյան» ՍՊԸ-ն չունի:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը.

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիան՝ շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության լիցենզիա:

Հրավերի 4.3-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

2010թ. փետրվարի 8-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրվել է շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության թիվ 13763 լիցենզիան

ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի 28.12.2017թ. թիվ 22/22. 1/7868-17 գրության համաձայն՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության թիվ 13763 լիցենզիայի գործողությունը կասեցվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016թ. հուլիսի 7-ի թիվ 130-Ա հրամանով ՀՀ

կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 124-Ն որոշման պահանջների չհամապատասխանելու պատճառով:

Ընկերությունը հայտնել է, որ վերոհիշյալի հիմքով «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի պահանջներով, պետք է առաջարկի «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին շտկել անհամապատասխանությունը: Միևնույն ժամանակ հայտնել է, որ շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության թիվ 13763 լիցենզիայի գործողությունը այլևս կասեցված չէ, և եթե կիրառվեր Կարգի 41-րդ կետի պահանջները, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն կշտկեր անհամապատասխանությունը և կներկայացներ համապատասխան ապացույց լիցենզիայի պատշաճ լինելու վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան ներդիրներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնհատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ամփոփելով վերագրյալը, Ընկերությունը հայտնել է, որ «Գ. Պապոյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տուժանքի մասին համաձայնագրում առկա անհամապատասխանության և վերջինիս մոտ հրավերով պահանջված լիցենզիայի բացակայության պայմաններում «Սեյսմշին» ՍՊԸ-ի և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտը ենթակա է մերժման:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք:

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ն ներկայացված համանման բողոքով Խորհրդին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջներով, առաջարկել «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին շտկել լիցենզիայում առկա անհամապատասխանությունը՝ ներկայացնելով համապատասխան ներդիրներ:
2. Դադարեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի «Սեյսմշին» ՍՊԸ-ի և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումը:

Ընկերության տնօրենը 10.01.2018թ. ժամը 11:30-ին որպես երրորդ կողմ, մասնակցելով 10.01.2018թ. ժամը 11:30-ին ԳԲԽ-ԱՄ-2017/55 բողոքով նշանակված նիստին, հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացնելիս տեղյակ չի եղել, որ Ընկերության լիցենզիան կասեցված է եղել:

Ընկերությունը պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.01.2018թ. ժամը 12:20-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Երևանի քաղաքապետարանը Խորհրդին է ներկայացրել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն վերջինիս կողմից բողոքների վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացվել:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 10.01.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է Խորհրդին, որ գնահատող հանձնաժողովը տեղյակ չի եղել, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի լիցենզիան կասեցված է եղել:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.01.2018թ. ժամը 12:20-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲԽ-ԱՄ-2017/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտեր են ներկայացրել «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն և «Սեյսմշին» և «Գ. Պապոյան» ՍՊԸ-ների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվել են՝

Քաղաքաշինության բնագավառում «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» ըստ հետևյալ ոլորտների՝

2/2	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	3. Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազոտություն

3. Հրավերի 4.3-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

4. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն 25.12.2017թ. հայտով ներկայացրել է Ընթացակարգի հրավերով պահանջվող լիցենզիան:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետով արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

6. Նույն արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի և «Սեյսմշին» և «Գ. Պապոյան» ՍՊԸ-ների /կոնսորցիում/ հայտերը գնահատվել են բավարար:

7. Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, իսկ երկրորդ տեղ զբաղեցնող՝ «Սեյսմշին» և «Գ. Պապոյան» ՍՊԸ-ները /կոնսորցիում/:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2-րդ ենթակետով արձանագրվել է, որ Մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը, հրավերով սահմանված ժամկետում, ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որը նույն արձանագրության 2-րդ կետով գնահատվել է բավարար:

9. Նույն արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Սեյսմշին» ՍՊԸ-ի 29.12.2017թ. բողոքը և ի լրումն բողոքի 25.01.2018թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի 16.01.2018թ. համանման բողոքը՝ կից փաստաթղթերով, Երևանի քաղաքապետարանի կողմից Մրցույթի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվել են՝

Քաղաքաշինության բնագավառում «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» ըստ հետևյալ ոլորտների՝

2/2	***Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).***
1	*2*
1	4. *<u>Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն</u>*

Հրավերի 4.3-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը <u>հայտով ներկայացնում է</u> սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (<u>ներդիրի</u>) պատճենը***:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն 25.12.2017թ. հայտով ներկայացրել է Մրցույթի հրավերով պահանջվող լիցենզիան:

«Սեյսմշին» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով Խորհրդին հայտնել է, որ 27.12.2017թ. թիվ 12-17/369 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտե /այսուհետ նաև՝ Կոմիտե/ և խնդրել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել տեղեկատվություն 08.02.2010թ. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված թիվ 13763 /շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության/ լիցենզիայի գործունեության վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված գրության՝ Կոմիտեն 28.12.2017թ. թիվ 22/22.1/7868-17 գրությամբ հայտնել է, որ 2010թ. փետրվարի 8-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված /շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության/ թիվ 13763 լիցենզիայի գործողությունը կասեցվել է, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016թ. հուլիսի 7-ի թիվ 130-Ա հրամանով՝ ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 124-Ն որոշման պահանջների չհամապատասխանելու պատճառով:

«Սեյսմշին» ՍՊԸ-ն հայտնել է, որ նման իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ Երևանի քաղաքապետարանի «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջին տեղ

զբաղեցրած ցմասնակից ճանաչելով «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

«Հուսալի կամար» ՍՊԸ-ն ներկայացված համանման բողոքով հայտնել է, որ տեղեկացված չի եղել լիցենզիայի գործողության կասեցման մասին, ավելին՝ Ընկերությունը ժամանակին կատարել է լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի վճարումները:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը 25.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետով արձանագրել է, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն, մասնակցելով Մրցույթին, հայտով չի ներկայացրել հրավերով նախատեսված լիցենզիայի ներդիրի պատճենը:

Մրցույթի հրավերի Մաս I-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի, ինչպես նաև Մրցույթի հրավերի Մաս I-ի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ***, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ելնելով վերոգրյալ իրավական հիմնավորումից, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն հայտերի բացման նիստի ընթացքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին, այն դեպքում երբ վերջինս հայտով չի ներկայացրել Մրցույթի հրավերով պահանջվող լիցենզիայի ներդիրը, գործել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 41-րդ կետի և Մրցույթի հրավերի Մաս I-ի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի պահանջների խախտմամբ, ուստի Խորհուրդը գտնում է, որ սույն մասով «Սեյսմշին» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի համանման բողոքով ներկայացված այն դիտարկմանը, որ «Սեյսմշին» և «Գ. Պապոյան» ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմ «Գ. Պապոյան» ՍՊԸ-ի հայտի հավելված 2.1-ում՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալներում, ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը սյունակում լրացրած է՝ Անձ. AG0242241, տրված 10.14.2004թ., 026-ի կողմից, իսկ հավելված 8-ում՝ տուժանքի մասին համաձայնագրում, նշված է անձ. AG0242241, տրված 10.04.2004թ., 026-ի կողմից, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է, որ ԳԲԽ-ԱՄ-2017/55 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհուրդը ստուգել է վերջինիս անձնագրի տվյալները և արձանագրել է, որ «Գ. Պապոյան» ՍՊԸ-ի կողմից հավելված 8-ում՝ տուժանքի մասին համաձայնագրում, նշված անձ. AG0242241, տրված 10.04.2004թ., 026-ի կողմից համապատասխանում է «Գ. Պապոյան» ՍՊԸ-ի անձնագրի տվյալներին, այսինքն հավելված 8-ում՝ տուժանքի մասին համաձայնագրում, անհամապատասխանություն առկա չէ:

Ինչ վերաբերում է «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի համանման բողոքով ներկայացված երկրորդ դիտարկմանը, այն է՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի ունեցած տեղեկությունների համաձայն՝ «Գ. Պապոյան» ՍՊԸ-ն չունի մրցույթի հրավերով պահանջված շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության լիցենզիա: Միևնույն ժամանակ «Սեյսմշին» ՍՊԸ-ի և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի միջև 22.12.2017թ. կնքված կոնսորցիումի պայմանագրում բացակայում է որևէ նշում, որ նշված մրցույթով պահանջվող աշխատանքները ում կողմից պետք է կատարվեն: Տվյալ դեպքում ենթադրվում է, որ մրցույթով նախատեսված աշխատանքները կարող են տեսականորեն կատարվել երկու մասնակցի կողմից, իսկ հրավերի համաձայն՝ աշխատանքների կատարման համար

պահանջվում է համապատասխան լիցենզիա, որը «Գ.Պապոյան» ՍՊԸ-ն չունի, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

ԳԲԽ-ԱՄ-2017/55 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհրդի այն հարցին, որ եթե չլիներ ֆինանսական միջոցներ ապահովելու խնդիր, արդյոք կկնքվեր կոնսորցիումի պայմանագիր, թե «Սեյսմշին» ՍՊԸ-ն ինքնուրույն կարող էր մասնակցել մրցույթին, «Սեյսմշին» ՍՊԸ-ի տնօրենը պատասխանել է, որ Ընկերությունը լիովին համապատասխանում է մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին, և միայն ֆինանսական միջոցների 50 տոկոսի անհրաժեշտության դեպքում է կնքել կոնսորցիումի պայմանագիրը:

«Սեյսմշին» և «Գ. Պապոյան» ՍՊԸ-ների միջև 22.10.2017թ. կնքված թիվ «ՍՇԳՊ-17/01» կոնսորցիումի պայմանագրի համաձայն՝ «Առաջատար գործընկեր» է հանդիսանում «Սեյսմշին» ՍՊԸ-ն, իսկ Գ. Պապոյան ՍՊԸ-ն՝ «Գործընկեր 1»:

Կոնսորցիումի պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ կողմերը համատեղ գործողություններ իրականացնելու նպատակով պարտավորվում են տրամադրել հետևյալ միջոցները՝

1.2.1. առաջատար գործընկերը /«Սեյսմշին» ՍՊԸ-ն/ տրամադրում է աշխատանքային ռեսուրսներ, հիմնական տեխնիկական միջոցներ, մասնագիտական փորձառություն, ֆինանսական միջոցներ /50 %/:

1.2.2. գործընկեր 1-ը /«Գ. Պապոյան» ՍՊԸ-ն/ տրամադրում է ֆինանսական միջոցներ /50%/:

Այսպիսով վերոգրյալից ելնելով, Խորհուրդը գտնում է, որ սույն մասով ևս «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ «Գ. Պապոյան» ՍՊԸ-ն Մրցույթում հանդիսանալով «Սեյսմշին» և «Գ. Պապոյան» ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմ՝ կողմերի միջև կնքված կոնսորցիումի պայմանագրով, տրամադրել է միայն 50% ֆինանսական միջոցներ, ուստի վերջինիս կողմից լիցենզիա չունենալու փաստը չի կարող հայտի մերժման հիմք հանդիսանալ:

Ինչ վերաբերում է «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված այն պնդմանը, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի պահանջներով, պետք է առաջարկի «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին շտկել անհամապատասխանությունը, ապա Խորհուրդն արձանագրում է, որ վերջինիս բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 29.12.2017թ. ներկայացված բողոքը բավարարել:

2. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված համանման բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

ա. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում առկա անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն տալ:

բ. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի «Սեյսմշին» ՍՊԸ-ի և «Գ. Պապոյան» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումը դադարեցնելու մասով պահանջը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ